ԲԱՑՈՒՄԱ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

գրական, հասարակական, բարոյական, տնտեսագիտական պատկերազարդ օրաթերթի,

որ լոյս է տեսնելու օգոստոս ամսի վերջերից՝ առաջաց «Բուսկիա Վեսոսմաթ» օրաթերթի մեծութեամբ (տարեկան բաժանորդագրութիւնը 7.ռ.)։

«Արշալոյսի» նպատակն է լինելու ընթերցասիրութեան թարմ եւ օգտակար նիւթ մատակարարել հայ ընթերցողներին՝ արծարծելով առողջապահական լուսաւոր գաղափարներ, բացատրելով ընթացիկ կեանքի երեւոյթները, հասարակական պէտ-պէտ հոսանքներն, ու հրատապ հարցերը եւ այդ բոլորի միջոցով նպաստել հայ ազգի զարգացմանն ու քաղաքակրթութեանը։ Աշխատակցելու հրաւիրուած են յայտնի հեղինակներ եւ մասնագէտներ։ Բացի դրանից խմբագրութիւնը լայն առիթ կունենայ բանալու հայ երիտասարդութեան առաջ, առանձնապէս աշխատելով տալ թարմ եւ օգտակար գիտելիքներ։

«Արշալոյսն» ունենալու է հետեւեալ բաժինները.

1. Կառավարչական կարգադրութիւններ, 2. Առաջնորդներ, 3. Հեռագիրներ (Գործակալութեան եւ սեպհական), 4. I. Ներքին տեսութիւն — ա. Ներքին լուրեր եւ բ. Փոքրիկ յօդուածներ ընթացիկ հարցերի մասին։ II. Արտաքին տեսութիւն, — ա. Յօդուածներ արտասահմանեան խոշոր դէպքերի մասին, բ. Թղթակցութիւններ արտասահմանից, գ. Քաղաքական լուրեր, դ. Հայկական կեանքի շուրջը, — Տեղեկութիւններ արտասահմանեան հայկական կեանքից, քաղուածքներ արտասահմանեան հայ թերթերից, հարկաւոր դէպքում խմբագրական բացատրութիւններով ու նկատողութիւններով։ III. Կովկասեան քրոնիկոն։ — ա. Յօդուածներ զուտ գաւառական կեանքի մասնաւոր, կրթական եւ այլ ընթացիկ կարիքների մասին. Թղթակցութիւններ եւ լուրեր։ բ. Գաւառն եւ երաժշտութիւն.— Ամփոփ տեսութիւններ թէ՛ տեղական (հայ եւ օտար) եւ թէ գաւառական ներկայացումների ու հանդէսների մասին։ 5. Տեղական կեանքը.— Լուրեր, տեղեկութիւններ ու յօդուածներ Թիֆլիսի կեանքից։ 6. Ընկերութիւններ եւ հիմնարկութիւններ։ — ա. Հա-

digitised by A.R.A.R.@

ջիւններ ու տեղեկութիւններ գիտական, դատաստանական, առեւտրական-արդիւնաբերական եւ հասարակական հիմնարկութիւնների մասին. բ. Գիտական նորութիւններ.— Ինքնուրոյն տեղեկութիւններ եւ թարգմանական քաղուածքներ օտար մամուլից։ 7. Մամուլի տեսութիւն եւ քննադատութիւն.— ա. Քաղուածքներ հայ եւ օտար մամուլից խմբագրական բացատրութիւններով եւ նկատողութիւններով. բ. Քննադատական յօդուածներ։ 8. Թղթակցութիւններ։ 9. Մատենախօսութիւն.— ա. Րեցենզիաներ հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի մասին. բ. Ամփոփ տեղեկութիւններ օտար լեզուներով լոյս տեսած գրքերի մասին, մանաւանդ հայերին, նրանց գրագէտներին եւ մերձաւոր արեւելքին վերաբերեալ. գ. Խմբագրատանն ստացուած գրքերի ցուցակը։ 10-11. Բանաստեղծական.— ա. Ինքնուրոյն եւ թարգմանական վէպեր, մանրավէպեր, բանաստեղծութիւններ եւ պատկերներ. բ. Սօցիալական-տնտեսագիտական ամփոփ յօդուածներ ու տեսութիւններ. գ. Գրական եւ գիտական տեսութիւններ. դ. Բժշկական եւ առողջապահական յօդուածներ. ե. Երկրագործական գրուածքներ։ Արդիւնագործութիւն եւ վաճառականութիւն.— Տեսութիւններ եւ տեղեկութիւններ արդիւնագործութեան եւ վաճառականութեան մասին։ Աշխատաւոր դասակարգի կեանքն ու կարիքները։ 12. Տեղեկատու.— ա. Ճուրհակներ եւ բորսա. բ. Օրացոյց. գ. Այսօր (տեղեկութիւններ ժողովների, հանդէսների եւ ներկայացումների մասին). դ. Ճանապարհորդութիւն (տեղեկ. երկաթուղիների եւ նաւերի մասին)։ Խորհրդատու.— Խորհուրդներ եւ պատասխաններ ընթերցողների առաջարկած իրաւաբանական-բժշկական հարցերին։ Նամակներ խմբագրութեան. Փոստարկղ։ 13. Յայտարարութիւններ։ 14. Պատկերներ։

Բաժանորդագրութեան պայմանները.— Թիֆլիզի եւ Ռուսաստանի համար՝ 4 ամիսը (սեպ.-յուն.) 2 ռ. 50 կոպ., 3 ամիսը՝ 2 ռ., 2 ամիսը՝ 1 ռ. 50 կոպ., 1 ամիսը՝ 75 կոպ.։ Արտասահմանի համար՝ 4 ամիսը 4 ռ. =9 մարկ=11 ֆրանկ=9 շիլլինգ=2 դոլլար։

Խմբագիր-հրատարակիչ՝ Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆ

Պէտք է գրել՝ Tiflis. Rédaction du journal «Archalouis».

digitised by A.R.A.R.@